R ծրագրավորման լեզվի հիմունքներ

Դասընթացի նպատակը

ԵՊՀ Բիզնես ինկուբատորի նախաձեռնությամբ իրականացվում է «R ծրագրավորման լեզվի հիմունքներ» դասընթացը: Ծրագիրը հնարավորություն կտա բիզնես գաղափարներում կիրառել տվյալահեն վերլուծական մոտեցումներ:

Դասախոսի մասին

Լուսինե Զիլֆիմյանը ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի դասախոս է և հետազոտող:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է վարքագծային տնտեսագիտությունը, մարդ-համակարգիչ փոխազդեցությունը և տվյալների վերլուծությունը:

Դասընթացի համառոտ նկարագիր

Դասընթացը նախատեսված է R ծրագրավորման լեզվի սկզբնական գիտելիքներ ձեռք բերելու համար: Դասընթացի ընթացքում մասնակիցները կծանոթանան R միջավայրի, R Studio-ի, տվյալների տիպերի և օբյեկտների հետ, կյուրացնեն ծրագրավորման կառուցվածքներ՝ պայմաններ, ցիկլեր, ֆունկցիաներ, ինչպես նաև կսովորեն աշխատել տվյալների, տվյալների ներմուծման, մաքրման, փոխակերպման և վիզուալիզացիայի հետ՝ օգտագործելով տարբեր գրադարաններ՝ dplyr, stringr, ggplot2:

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան կատարել տվյալների վերլուծություն և կիրառել վիճակագրական մեթոդներ R ծրագրավորման լեզվի միջոցով:

Նախնական պահանջվող գիտելիքներ

Մասնակիցները պետք է ունենան համակարգչային հիմնարար հմտություններ, վերլուծական մտածողություն և ընդհանուր պատկերացում տվյալների հետ աշխատանքի վերաբերյալ: Տնտեսագիտության, բիզնեսի, հոգեբանության, սոցիալական գիտությունների, SS ոլորտում կրթական կամ մասնագիտական նախապատրաստվածությունը ցանկալի է, բայց ոչ պարտադիր:

Միջոցառման վայրը և օրը

Հայտերը ընդունվում են մինչև մարտի 1-ը, գրանցվել հետևյալ **հղումով:**

Դասախոսությունները կկայանան 6 օր, յուրաքանչյուր երեքշաբթի, ժամը 19:00-21:00:

Դասախոսությունները կմեկնարկեն մարտի 3-ից:

Ուսուցման ձևաչափը՝ առկա:

Ուսուցման վճարը՝ 40,000 ՀՀ դրամ: ԵՊՀ-ի մասնակիցների համար դասընթացն անվճար է: